Ախալցիխեի Հոգևոր Տեսչությունը շուրջ մեկ տարի է ինչ Աստծո օրհնությամբ և նախախնամությամբ տրամադրում է սոցիալական օգնություն Տեսչությանը պատկան տարածաշրջանների անապահով ընտանիքներին:

Մեկ տարվա ընթացքում Տեսչությունն օգնել է շուրջ 189 ընտանիքների: Այդ ընտանիքներին որպես օգնություն տրամադրվել է սննդամթերք, բժշկության համար դրամական աջակցություն, ուսման վարձ, տան վարձ, տակդիրներ: Յուրաքանչյուր օգնություն տրամադրվում է Ախալցիխեի հոգևոր տեսուչ՝ Հոգեշնորհ Տեր Հակոբ աբեղա Սահակյանի և Ախալցիխեի հարակից շրջանների հոգևոր հովիվ՝ Արժանապատիվ Տեր Թորգոմ քահանա Վարդանյանի ներկայությամբ և անմիջական մասնակցությամբ: